

## ***Ընդհանուր ունակությունների թեստ***

Ընդհանուր ունակությունների թեստի նպատակն է բանավոր և քանակական մտածողության ունակությունների համարժեք գնահատումը: Այն ստուգում է նոր տեղեկատվությունը հասկանալու և վերախմաստավորելու, ինչպես նաև տրամաբանորեն դատելու ունակությունը:

Ընդհանուր ունակության թեստը բաղկացած է երկու մասից:

### ***Բանավոր մաս***

Թեստի բանավոր մասի միջոցով ստուգվում են ակադեմիական գիտելիքի ձեռք բերմանը անհրաժեշտ լեզվական ունակությունները, մասնավորապես, տարբեր բովանդակության տեքստը հասկանալու և իմաստավորելու, ինչպես նաև տրամաբանորեն դատելու ունակությունը:

Այս մասում հետևյալ տիպի առաջադրանքներ են.

- համանմանություններ,
- նախադասության լրացում,
- տրամաբանություն,
- ընթերցած տեքստի վերախմաստավորում:

### ***Համանմանություններ (6 առաջադրանք)***

Այս տիպի առաջադրանքների միջոցով ստուգվում է.

- բառերի իմաստների (նշանակությունների) իմացությունը/ դրանց ներթափանցելու ունակությունը,
- բառերի իմաստների միջև էական կապերի, առնչությունների մեջ ներթափանցելու ունակությունը,
- նման առնչությունների բացահայտման ունակությունը:

### ***Նախադասությունների լրացում (5 առաջադրանք)***

Այս տիպի առաջադրանքների միջոցով ստուգվում է.

- բառերի և արտահայտությունների իմաստների (նշանակությունների) իմացությունը/դրանց ներթափանցելու ունակությունը,
- նախադասությունների մասերի միջև իմաստային համապատասխանության հաստատման ունակությունը:

### ***Տրամաբանություն (7 առաջադրանք)***

Այս տիպի առաջադրանքների միջոցով ստուգվում է.

- առկա տվյալների (նախադրյալների) հիման վրա եզրակացությունը ճիշտ կատարելու ունակությունը,

***Ընթերցած տեքստի վերախմաստավորում (7 առաջադրանք)***

Թեստի այս բաժնի միջոցով ստուգվում է ընթերցած տեքստից տեղեկատվություն ստանալու, վերլուծելու և գնահատելու ունակությունը: Տեքստի հետ կապված յուրաքանչյուր հարցի/առաջադրանքի կատարման համար աշակերտը պետք է կարողանա.

- սահմանել տեքստի թեման,
- սահմանել տեքստի նշանակությունը,
- ընթերցել/խմաստավորել տեքստում տրված բաց տեղեկատվությունը,
- որոնել տեքստի հանգուցային բառերը և ամբողջական արտահայտությունները,
- համատեքստի համաձայն բացատրել կամ ճանաչել առանձին բառի կամ արտահայտության իմաստը,
- որոշել տեքստի տարբեր մասերի (նախադասությունների և պարբերությունների) միջև առնչությունները,
- որոշել առանձին պարբերության գործառույթը (նշանակությունը),
- ստացած տեղեկատվությունում տարբերակել հիմնականը (էականը) և երկրորդականը,
- տարբերակել միմյանցից ենթադրությունը և փաստը,
- որոշել տեքստում ներկայացված երևույթների միջև եղած կապերը,
- ամբողջական տեքստից կամ դրա առանձին մասից կատարել եզրակացություն,
- կերտել տեքստի հիմնական գաղափարը,
- ճանաչել ենթատեքստը,
- տեքստից հայթայթած տեղեկատվությունը կիրառել նոր հիմնախնդրի լուծման նպատակով:

## ***Մաթեմատիկական մաս***

Թեստի մաթեմատիկական մասի միջոցով ստուգվում է քանակական բնույթի հիմնախնդիրների լուծման, թվային գործողությունների կատարման, ինչպես նաև աղյուսակի, գրաֆիկի կամ դիագրամի տեսքով ներկայացված տեղեկատվության վերլուծության ունակությունը:

Այս մասում հետևյալ տիպի առաջադրանքներ են.

- ***քանակական համեմատություն*** (7 առաջադրանք),
- ***խնդիրներ*** (15 առաջադրանք),
- ***տվյալների վերլուծում*** (3 առաջադրանք):

Մաթեմատիկական մասի առաջադրանքների միջոցով ստուգվում է.

- պարզ հաշվարկների կատարման ունակությունը,
- պարզ հանրահաշվական արտահայտությունների և դրանց ձևափոխությունների կիրառման ունակությունը,
- պարզ երկրաչափական հասկացություններից օգտվելու ունակությունը,
- աղյուսակի, գրաֆիկի, դիագրամի տեսքով ներկայացված տվյալների ըմբռնման և վերլուծման ունակությունը:

**Ընդհանուր ունակությունների թեստի  
առաջադրանքների նմուշներ**

**Բանավոր մաս**

**Համանմանություններ**

Այս տիպի առաջադրանքներում տրված է մուգ տառատեսակով առանձնացված երկու բառ (սկզբնական գույգ), որոնց իմաստների միջև գոյություն ունի որոշակի առնչություն: Որոշե՛ք ինչ տեսքի է այս առնչությունը:

Ենթադրական պատասխանների յուրաքանչյուր տարբերակում տրված է նաև իմաստով փոխկապակցված բառերի գույգ: Ընտրե՛ք դրանցից այն գույգը, որտեղ բառերի իմաստների միջև առնչությունը սկզբնական գույգում առկա առնչության նման է (համանման է): Պատասխանն ընտրելիս ի նկատի ունեցե՛ք գույգերում բառերի հերթականությունը:

**1. ծիտ : բույն**

- ա) կապիկ : ծառ
- բ) գայլ : տափաստան
- գ)\* արջ : որջ
- դ) ուղտ : անապատ

**2. խճաքար : քար**

- ա) հեծանիվ : մեքենա
- բ)\* արահետ : ճանապարհ
- գ) սենյակ : բնակարան
- դ) տերև : թուփ

**3. լցվում է : դատարկվում է**

- ա) ճաքում է : պայթում է
- բ) թառամում է : փոխվում է
- գ) ծնվում է : զարգանում է
- դ)\* լուսանում է : մթնում է

**4. գիտություն : ֆիզիկա**

- ա) շինություն : աղյուս
- բ) պար : երաժշտություն
- գ) հագուստ : շոր
- դ)\* խաղ : պահմտոցի

**5. ծիածան : գույնզգույն**

- ա) թուփ : մշտադալար
- բ) խնձոր : հասած
- գ)\* կրակ : կիզիչ
- դ) թունել : երկար

**6. դերասան : կրկնօրինակող**

ա) սպա : զինվոր

բ) պաշտպան : պահակ

գ)\* զինվորական ծառայող : պահեստային

դ) պատերազմի վետերան : զորակոչիկ

## **Նախադասությունների լրացում**

*Տրված են նախադասություններ, որոնցում բաց են թողնված մի քանի բառեր: Բաց թողած բառերը նախադասության մեջ նշված են գծերով: Մի գիծը երբեմն ենթադրվում է մեկ բառ, իսկ երբեմն՝ մի քանի բառ:*

Ենթադրական պատասխանների յուրաքանչյուր տարբերակ ներառում է բառերի խումբ, որի մասերը միմյանցից առանձնացված են շեղ (/) գծերով: Ընտրե՛ք պատասխանի այն տարբերակը, որի յուրաքանչյուր մասի հերթականությամբ տեղադրումը համապատասխան բաց թողած տեղերում, կտա իմաստով արդարացված նախադասություն:

**1.** ——— առարկա բարձրացնելուց հետո դրանից ——— առարկան ավելի ——— է թվում, քան այն իրականում է, իսկ թեթև առարկա բարձրացնելուց հետո ծանր առարկան շատ ավելի ծանր է թվում:

- ա) Թեթև / ծանր / թեթև
- բ) Թեթև / թեթև / ծանր
- գ)\* Ծ ա ն ը / թեթև / թեթև
- դ) Ծ ա ն ը / թեթև / ծանր

**2.** ——— , ում կարծիքով Սև ծովում ձկների քանակի նվազումը միայն ակտիվ ձկորսության կործանիչ ազդեցությունը ——— : Սև ծովում միջավայրի աղտոտման հետևանքով ——— նաև այն ձկների թիվը, որոնք ձկնորսության օբյեկտ չեն ներկայացնում:

- ա) Ճիշտ է դատում նա / է վկայում / նվազում է
- բ) Մխավում է նա / չի վկայում / ավելանում է
- գ) Ճիշտ է դատում նա / չի վկայում / ավելանում է
- դ)\* Մխավում է նա / է վկայում / նվազում է

**3.** Մի հայտնի իրավաբանի կարծիքով, օրենքները ստեղծվում են ——— նպատակով: Համապատասխանաբար, եթե գոյություն ունի օրենք, որն արգելում է գողությունը, ——— , որ այս երևույթը ——— :

- ա)\* ակտուալ խնդիրների կարգավորման / պետք է մտածենք / հրատապ հարց է մեր հասարակության համար
- բ) սպասելի բարդությունների նախօրոք կանխատեսման / անթույլատրելի է մտածել / ապագայում կվերածվի մեր հասարակության հիմնախնդրի
- գ) առանձնահատուկ հանցանքների վերացման / պետք է մտածենք / սովորական բան է մեր իրատեսության համար
- դ) հանցանքների նոր տեսակների առաջացումից խուսափելու / անթույլատրելի է մտածել / օտար է մեր իրատեսության համար

4. Երբեմն սեփական մտադրության նախապես բացահայտ հայտարարելը — ստանձնած պարտավորությունների նկատմամբ — : Ճիշտ այդ պատճառով բազում կազմակերպություններ կանխամտածված — խոստումներ, որպեսզի — :

ա)\* պայմանավորում է / հավատարմությունը / տալիս են հրապարակային / դա լինի նրանց կատարման երաշխիք

բ) առաջացնում է / բացասական վերաբերմունքը / կատարում են հրապարակային / ստեղծվի նրանց նկատմամբ դրական տրամադրվածություն

գ) պայմանավորում է / դրական վերաբերմունքը / չեն կատարում հրապարակային / ստեղծվի նրանց նկատմամբ նպաստավոր տրամադրվածություն

դ) կրճատում է / սառնասրտությունը / չեն կատարում հրապարակային / դա նրանց կատարման երաշխիք լինի

5. Մտածողության գործընթացը ներկայացնում է անձնական ակտիվ, նպատակամղված գործողություն: Բայց երբ մենք \_\_\_\_\_ որևէ հարցի մասին, \_\_\_\_\_ մենք, \_\_, և ոչ թե՛ \_\_\_\_\_:

ա) դատողություն ենք անում / ապա գիտակցում ենք մեր պատկերացումների և կարծիքների ընթացքը, այսինքն / երազում ենք / մտածում

բ) դատողություն ենք անում / ապա ականայից տրվում ենք պատկերացումների և կարծիքների ընթացքին, այսինքն՝ / մտածում ենք / երազում

գ) ոչ թե՛ դատողություն ենք անում / այլ գիտակցում ենք մեր պատկերացումների և կարծիքների ընթացքը, ապա / մտածում ենք / երազում

դ)\* ոչ թե՛ դատողություն ենք անում / այլ ականայից տրվում ենք պատկերացումների և կարծիքների ընթացքին, ապա / երազում ենք / մտածում

## **Տրամաբանություն**

*Այս տիպի առաջադրանքները տարբերվում են միմյանցից նախնական տվյալների և կատարվելիք եզրակացությունների տեսակետից: Այդ պատճառով հատկապես ուշադրություն դարձրե՛ք հարցին, որը կցված է յուրաքանչյուր առաջադրանքին և տրված տարբերակներից ընտրե՛ք համապատասխան պատասխանը:*

*Որոշ հարցերի պատասխանելը կհեշտացնեք տվյալները գծագրի կամ դիագրամի ձևով արտահայտելով:*

### **1. Տրված է.**

- Այն ամենը, ինչ փայլում է, ոսկի չէ:

*Ստորև թվարկածներից ո՞ր դրույթն ունի նույն բովանդակությունը, ինչ տրվածը:*

ա) Գոյություն ունի այնպիսի ոսկի, որը չի փայլում:

բ) Այն, ինչը ոսկի չի, չի փայլում:

գ)\* Որոշ բաներ, որոնք չեն փայլում, ոսկի չեն:

դ) Ինչը փայլում է, ոսկի չէ:

### **2. Տրված է.**

- Նիկան կարմրեց:

*Ստորև թվարկածներից ո՞րը պետք է վերցնենք որպես երկրորդ դրույթ, որպեսզի կարողանանք եզրակացություն կատարել:*

- Նիկան իրեն մեղավոր է զգում:

ա) Բոլորը, ովքեր իրենց մեղավոր են զգում, կարմրում են:

բ) Ոմանք, ովքեր կարմրում են, իրենց մեղավոր են զգում:

գ) Ոմանք, ովքեր իրենց մեղավոր են զգում, կարմրում են:

դ)\* Բոլորը, ովքեր կարմրում են, իրենց մեղավոր են զգում:



3. Էքսկուրսիաներ պլանավորելիս աշակերտները հետևյալ ցանկություններն արտահայտեցին.

- պատմական հուշարձաններ այցելեն գարնանը կամ աշնանը:
- Հնէաբանական պեղումներին ներկա գտնվեն գարնանը կամ ամռանը:
- Թանգարաններ այցելեն աշնանը կամ ամռանը:

*Էքսկուրսիաների հերթականության ո՞ր տարբերակում են նկատառված աշակերտների բոլոր երեք ցանկությունները:*

- ա)\* գարնանը՝ պատմական հուշարձաններ, ամռանը՝ հնէաբանական պեղումներ, աշնանը՝ թանգարաններ
- բ) գարնանը՝ պատմական հուշարձաններ, ամռանը՝ թանգարաններ, աշնանը՝ հնէաբանական պեղումներ
- գ) գարնանը՝ թանգարաններ, ամռանը՝ պատմական հուշարձաններ, աշնանը՝ հնէաբանական պեղումներ
- դ) գարնանը՝ հնէաբանական պեղումներ, ամռանը՝ պատմական հուշարձաններ, աշնանը՝ թանգարաններ

4. Սեղանի չորս կողմում նստած են Իլիան, Դիտոն, Նինոն և Կոտեն (ոչ անպայման այս հերթականությամբ): Նրանցից մեկը ինժեներ է, երկրորդը՝ ուսուցիչ, երրորդը՝ լրագրող, չորրորդը՝ դերասան: Կոտեից ձախ նստած է ինժեները, իսկ աջ՝ Նինոն, ով ո՛չ դերասան է, ո՛չ էլ ուսուցիչ: Դիտոյից աջ նստած է ուսուցիչ:

*Ի՞նչ մասնագիտություն ունի Իլիան:*

- ա) ուսուցիչ
- բ) լրագրող
- գ)\* դերասան
- դ) ինժեներ

5. Տրված է երկու դրույթ.

- Էթե անձրևը շուտով չդադարի, Նանան առավոտյան զբոսնելու չի գնա:
- Եթե Նանան առավոտյան զբոսնելու գնա, նա աշխատանքից կուշանա:

*Հետևաբար, էթե Նանան առավոտյան զբոսնելու գնաց, անձրևը շուտ է դադարել:*

Այս եզրակացությունը.

- ա) բխում է միայն երկու դրույթներից միաժամանակ
- բ) բխում է յուրաքանչյուր դրույթից երկրորդից անկախ
- գ)\* բխում է միայն դրույթներից մեկից, մյուսից անկախ
- դ) չի բխում տրված դրույթներից

## **Ընթերցած տեքստի վերախմաստավորում**

*Ուշադրությամբ ընթերցե՛ք և վերախմաստավորե՛ք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը արդարացված է տրված տեքստի համաձայն (որպես նմուշ ներկայացված է հատված տեքստից)*

Երեխայի հոգեբանությունը որպես գիտության խնդիր ներկայացնում է մարդու կյանքի այն ժամանակաշրջանի հետազոտությունը, երբ էականորեն նա դեռևս զրկված է, այսպես կոչված, գիտակցված կյանքի ունակությունից և նրա վարքը դեռևս որոշվում է անմիջական պահանջմունքներով: Իսկ դա շարունակվում է բավական ժամանակ. նախ մինչև 6-7 տարեկան, այսինքն մինչև դպրոց ընդունվելը և այնուհետև դպրոցում, որտեղ երեխան զարգացման բարդ աստիճաններ է անցնում:

Չափահաս անձը, ի տարբերություն երեխայի, երբ զգում է որևէ պահանջմունք, նա չի ձգտում անմիջականորեն՝ այդ վայրկյանին ևեթ այն բավարարել: Նա արդեն մշակած ունի արտակարգ ունակություն՝ զսպել, և այս կամ այն արարքին դիմել այն բանից հետո, երբ կորոշի, թե ինչ վարքագիծ կլինի նրա համար մատչելի: Ճիշտ սա է գիտակցված կյանքի ունակությունը:

1. Թվարկածներից ո՞րն է ճշմարտացիորեն արտացոլում տեքստի առաջին և երկրորդ պարբերությունների հիմնական կարծիքը:

- ա) Առաջին պարբերությունում նշված է մինչդպրոցական տարիքի երեխայի վարքի յուրահատկությունը: Իսկ երկրորդում բնութագրված է դպրոցի աշակերտի վարքը:
- բ) Առաջին պարբերությունում նշված է, որ երեխան զարգացման բարդ աստիճաններ է անցնում, իսկ մյուսում նկարագրված է երեխայի հոգեբանությունը՝ որպես գիտության գլխավոր մեթոդ
- գ) Առաջին պարբերությունում նշված է երեխայի վարքի հիմնական յուրահատկությունը, իսկ երկրորդում նկարագրված է երեխայի կողմից գիտակցված կյանքի ունակության աստիճանական մշակումը
- դ)\* Առաջին պարբերությունում նշված է երեխայի վարքի հիմնական յուրահատկությունը, իսկ երկրորդում նկարագրված է դեռահաս մարդկանց էական հատկանիշներից մեկը

2. Ի՞նչ է «գիտակցված կյանքի ունակություն» (պատասխանե՛ք երկրորդ պարբերության համաձայն): Սա է մարդու ունակությունը.

- ա)\* նախապես կանխատեսել վարքի դրական և բացասական արդյունքները և իրականացնել իրեն մատչելի վարքագիծ
- բ) զգալ պահանջմունք և անմիջականորեն, այդ պահին ևեթ բավարարել այն
- գ) խուսափել իր համար մատչելի վարքագծի իրականացումից
- դ) նախապես զգալ, թե ինչ դրական և բացասական կողմեր ունի այս կամ այն պահանջմունքը

## Մաթեմատիկական մաս

### Քանակական համեմատություն

1. Համեմատե՛ք  $A$  և  $B$  սյունակների վանդակներում տրված քանակությունները:

$A$	$B$
Մեծագույն հնգանիշ թիվ	$10^5$

ա)  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $B$  սյունակի վանդակում տրված քանակությունից,

բ)\*  $B$  սյունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունից,

գ)  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունը  $B$  սյունակի վանդակում տրված քանակությանը հավասար է,

դ) տրված տեղեկատվությունը բավարար չէ որոշելու համար ո՞ր քանակությունն է ավելի:

2. Համեմատե՛ք  $A$  և  $B$  սյունակների վանդակներում տրված քանակությունները:

$A$	$B$
$m = -2, n = 3:$	
$3m - 6 : n$	$(3m - 6) : n$

ա)  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $B$  սյունակի վանդակում տրված քանակությունից,

բ)\*  $B$  սյունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունից,

գ)  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունը  $B$  սյունակի վանդակում տրված քանակությանը հավասար է,

դ) տրված տեղեկատվությունը բավարար չէ որոշելու համար ո՞ր քանակությունն է ավելի:

3. Համեմատե՛ք  $A$  և  $B$  սյունակների վանդակներում տրված քանակությունները:

$A$	$B$
$\frac{6}{7}$	$\frac{7}{8}$

- ա)  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $B$  սյունակի վանդակում տրված քանակությունից,
- բ)\*  $B$  սյունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունից,
- գ)  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունը  $B$  սյունակի վանդակում տրված քանակությանը հավասար է,
- դ) տրված տեղեկատվությունը բավարար չէ որոշելու համար  $n^{\circ}$  ր քանակությունն է ավելի:


4. Համեմատե՛ք  $A$  և  $B$  սյունակների վանդակներում տրված քանակությունները:

$A$	$B$
<p>Քարհանքից ավազը միատեսակ բեռնատար մեքենաներով պետք է դուրս բերեն:                  2 բեռնատար մեքենայով քարհանքից 5 ժամում դուրս են բերում <math>60 \text{ մ}^3</math> ավազ:</p>	
3 բեռնատար մեքենայով քարհանքից 4 ժամում դուրս բերված ավազի քանակությունը	$72 \text{ մ}^3$

- ա)  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $B$  սյունակի վանդակում տրված քանակությունից,
- բ)  $B$  սյունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունից,
- գ)\*  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունը  $B$  սյունակի վանդակում տրված քանակությանը հավասար է,
- դ) տրված տեղեկատվությունը բավարար չէ որոշելու համար  $n^{\circ}$  ր քանակությունն է ավելի:

5. Համեմատե՛ք  $A$  և  $B$  սյունակների վանդակներում տրված քանակությունները:

$A$	$B$
<p>Ընդհանուր կենտրոն ունեցող երկու շրջանագծերից առաջին շրջանագծի տրամագծի երկարությունը 12 սմ է, իսկ երկրորդինը՝ 7 սմ: <math>M</math> կետը գտնվում է առաջին շրջանագծի վրա, իսկ <math>N</math> կետը՝ երկրորդի վրա:</p>	
<div style="border: 1px solid black; padding: 5px; width: fit-content; margin: 0 auto;"> <p><math>MN</math> հատվածի երկարությունը</p> </div>	<div style="border: 1px solid black; padding: 5px; width: fit-content; margin: 0 auto;"> <p>10 սմ</p> </div>



- ա)  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $B$  սյունակի վանդակում տրված քանակությունից,
- բ)\*  $B$  սյունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունից,
- գ)  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունը  $B$  սյունակի վանդակում տրված քանակությանը հավասար է,
- դ) տրված տեղեկատվությունը բավարար չէ որոշելու համար ո՞ր քանակությունն է ավելի:

6. Համեմատե՛ք  $A$  և  $B$  սյունակների վանդակներում տրված քանակությունները:

$A$	$B$
<p>Վաժան, Դավիթը, Սոփոն և Աննան խեցիներ հավաքեցին: Վաժան հավաքեց բոլորից ավելի խեցի, իսկ Դավիթը՝ բոլորից պակաս:</p>	
<div style="border: 1px solid black; padding: 5px; width: fit-content; margin: 0 auto;"> <p>Տղաների հավաքած խեցիների քանակը</p> </div>	<div style="border: 1px solid black; padding: 5px; width: fit-content; margin: 0 auto;"> <p>Աղջիկների հավաքած խեցիների քանակը</p> </div>

- ա)  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $B$  սյունակի վանդակում տրված քանակությունից,
- բ)  $B$  սյունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունից,
- գ)  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունը  $B$  սյունակի վանդակում տրված քանակությանը հավասար է,
- դ)\* տրված տեղեկատվությունը բավարար չէ որոշելու համար ո՞ր քանակությունն է ավելի:

7. Համեմատե՛ք  $A$  և  $B$  սյունակների վանդակներում տրված քանակությունները:

$A$	$B$
Դասասենյակում 12 աշակերտ է, որոնց միջին հասակը (բոլոր) 150 սանտիմետր է: Նրանցից մի աշակերտ սենյակից դուրս եկավ:	
Մնացած աշակերտների միջին հասակը (բոլոր)	150 սմ

- ա)  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $B$  սյունակի վանդակում տրված քանակությունից,
- բ)  $B$  սյունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունից,
- գ)  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունը  $B$  սյունակի վանդակում տրված քանակությանը հավասար է,
- դ)\* տրված տեղեկատվությունը բավարար չէ որոշելու համար ո՞ր քանակությունն է ավելի:

8. Համեմատե՛ք  $A$  և  $B$  սյունակներում տրված քանակությունները:

$A$	$B$
Եռանկյան պարագիծը հավասար է 10 սմ-ի:	
Եռանկյան ամենամեծ կողմի երկարությունը	4 սմ է:


- ա)  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $B$  սյունակի վանդակում տրված քանակությունից,
- բ)  $B$  սյունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունից,
- գ)  $A$  սյունակի վանդակում տրված քանակությունը  $B$  սյունակի վանդակում տրված քանակությանը հավասար է,
- դ)\* տրված տեղեկատվությունը բավարար չէ որոշելու համար ո՞ր քանակությունն է ավելի:

## Խնդիրներ

1. Որքանո՞վ կնվազի 837076 թիվը, եթե նրա գրությունում երկու 7-երը փոխարինենք 5-երով:

- ա) 4-ով,
- բ) 2000-ով,
- գ)\* 2020-ով,
- դ) 2 200-ով:

2.  $K$  կետը  $ABCD$  ուղղանկյան  $BC$  կողմի միջին կետն է: Քանի՞ անգամ ավելի է  $ABCD$  ուղղանկյան մակերեսը  $KDC$  եռանկյան մակերեսից:




- ա) 2 անգամ,
- բ) 3 անգամ,
- գ)\* 4 անգամ,
- դ) 6 անգամ:

3. Ավտոբուսում ուղևորների թվաքանակը հավասար է  $b$ -ի: Կանգառում ավտոբուս բարձրացավ 5 ուղևոր, իսկ իջավ՝ 9 ուղևոր: Քանի՞ ուղևոր կլինի ավտոբուսում այս կանգառից հետո:

- ա)\*  $b - 4$
- բ)  $b - 14$
- գ)  $b + 4$
- դ)  $b + 14$

4. Միատեսակ չափի խորանարդներն այնպես դասավորեցին, որ ուղղանկյուն զուգահեռանիստի ձևի պատկեր ստացան (տես՝ գծագիրը): Ընդամենը քանի՞ խորանարդ են դասավորել:



- ա) 36
- բ) 54
- գ) 64
- դ)\* 72

5. Ընկերության շահույթը 2001 թվականին կազմեց 500 հազար լարի: Յուրաքանչյուր հաջորդ տարի ընկերության շահույթը, նախորդ տարվա համեմատությամբ, ավելանում էր 20%-ով: Ո՞ր թվականին ընկերության շահույթը կդառնար 700 հազար լարիից ավելի:

- ա) 2002
- բ)\* 2003
- գ) 2004
- դ) 2005

6. Եթե գնացքը յուրաքանչյուր 1 ժամ և 15 ր-ում անցնում է 80 կմ, ապա այս գնացքը մեկ ժամում կանցնի.


- ա) 56 կմ,
- բ) 60 կմ,
- գ)\* 64 կմ,
- դ) 68 կմ:

7. Աննան մտադիր է վերնազգեստ և տաբատ հագնել: Նա ունի կարմիր, սպիտակ և կապույտ վերնազգեստ և նույն գույների երեք տաբատ: Աննան երբեք միասին չի հագնում միևնույն գույնի հագուստ: Վերնազգեստի և տաբատի ներդաշնակության քանի՞ հնարավոր տարբերակ ունի Աննան:

- ա) 5
- բ)\* 6
- գ) 7
- դ) 8

8. Ուղղանկյան փոքր կողմը գտնվում է հավասարասրուն եռանկյան հիմքի վրա (տես՝ գծագիրը):

Հավասարասրուն եռանկյան հիմքի մոտ գտնվող անկյան մեծությունը  $70^\circ$  է: Ինչի՞ է հավասար հավասարասրուն եռանկյան սրունքով և ուղղանկյան մեծ կողմով կազմված  $\alpha$  բութ անկյան մեծությունը:




- ա)  $110^\circ$ -ի,
- բ)  $140^\circ$ -ի,
- գ)\*  $160^\circ$ -ի,
- դ)  $170^\circ$ -ի:



## Տվյալների վերլուծում

Երկրում աճեցրած բանջարեղենի հիմնական մասը կազմում են կաղամբը, լոլիկը, գազարը և ճակնդեղը: Դրանցից կաղամբ, լոլիկ և գազար աճեցնում են երկրի բոլոր տարածաշրջաններում, իսկ ճակնդեղ՝ միայն արևմտյան տարածաշրջաններում:

Դիագրամի վրա տրված աճեցված բանջարեղենի ընդհանուր քանակության քանի՞ տակոսն են կազմում կաղամբի, լոլիկի, գազարի և ճակնդեղի քանակությունները ինչպես ամբողջությամբ երկրում, այնպես էլ երկրի արևմտյան տարածաշրջաններում:



Դիագրամի համաձայն պատասխանե՛ք հետևյալ 3 հարցին.

1. Քանի՞ անգամ է գերազանցում երկրի արևմտյան տարածաշրջաններում աճեցված լոլիկի քանակությունը նույն տարածաշրջաններում աճեցված կաղամբի քանակությանը:

- ա) 1,5 անգամ,
- բ) 1,6 անգամ,
- գ) 1,7 անգամ,
- դ) 1,8 անգամ:

2. Քանի՞ հազար տոննայի է հավասար երկրում աճեցված գազարի քանակությունը, եթե երկրում աճեցված կաղամբի քանակությունը հավասար է 56 հազար տոննայի:

- ա) 24
- բ) 28
- գ) 32
- դ)\* 36

3. Երկրում աճեցված քանջարեղենի ընդհանուր քանակի  $n$  ը մասն է կազմում երկրի արևմտյան տարածաշրջաններում աճեցված քանջարեղենի քանակը:

ա) հինգերորդ

բ) քառորդ,

գ) երրորդ,

դ)\* կեսը: